Պարսից բանակից, չյաջողուեցաւ. այդ ջանքերի և խուզարկութեան ժամանակ, մի անգամ, երբ նա մօտեցել էր «ի սուրբ տեղի տան Նահատակին Գրիգորի» յիշելով, որ սրբերը կարեկից են վշտացեալներին, և մտաբերելով, որ Ս. Գրիգոր «Համարձակութիւն» ունի Աստուծոյ առաջ, հաւատով սրբոտանց օգնութեան կանչեց Նորան, Քանզի հնարաւոր է Աստուծոյ ամենայն, զբոխնդիր քաջ ախորժելով կամի լսել և կատարել, ասում է Ներսէհ Ս. Գրիգորին, Եւ չսխալուեցաւ. որովհետև « Փրկչին Աստուծոյ անդ և անդ հանեալ զկապեալն Հրահատ ի շրջափակ զգուշութենէ պահապանացն, արձակէր խաղաղութեամբ առ սիրելի եղբայրն իւր և յաշխարհ։» Նկարագրելով թէ ինչպէս ուրախ և համարձակ էին ուխտապահները Նիսորի բանակում և ինչպէս ամօթահար և ընկճուած էին ուրացողները, Փարպեցին ոգևորուած ասում է. Լուսաւորեալ ծագէին երեսք աստուածասէր պաշտօնէիցն ըստ նմանութեան լուսոյն, զոր ընտրեցին ինքեանք և լուսաւորեցան, իսկ ի վերայ երեսաց մոխրապաշտացն նոյն կերպարան մոխրոյն իջեալ նստէր. յայնժամ յայտնի ակն խորհրդոյ ճշմարտասիրացն զպայծառարար յաջողութեան ճախրումն սրբոյն Գրիգորի ամենայն ճգնաղգեցիկ ընկերովքն իւրովք ի վերայ երկարահամբեր ուխտապահացն բա-